

Vano Siradeghyan

Վանո Սիրադեղյան

Brat baranek

Գառ-ախպերիկ




Vano Siradeghyan

Brat baranek

Վանո Սիրադեղյան

Գառ-ախպերիկ



Wydanie niniejszego opowiadania jest realizacją pomysłu na serię wydawniczą prezentującą współczesną literaturę ormiańską. Chcieliśmy, by to jedno opowiadanie stało się powodem powstania jednej książeczki, wierząc, że krótka forma literacka może funkcjonować samowystarczalnie jako osobne i niemalże wielkie dzieło.

Pierwszym opowiadaniem-książeczką z tej serii jest „Brat baranek” Vano Siradeghyana. Wybór był dla nas oczywisty, ponieważ właśnie na podstawie tego opowiadania napisaliśmy scenariusz krótkometrażowego filmu „Mleczny brat”. Nasz wspólny projekt rozwijaliśmy w Szkole Wajdy, a w 2014 r., dzięki programowi 30 minut – Studio Munka, Stowarzyszenia Filmowców Polskich a także przy wsparciu finansowym Ormiańskiego Kinocentrum, powstał nasz film.

Pamiętając o źródłach naszych inspiracji, wydawnictwo to jest pewnego rodzaju długiem wdzięczności, który mamy nadzieję stanie się dobrym początkiem małej „wielkiej” serii, która pobudzi ciekawość Czytelnika i sięgnie On po współczesną literaturę ormiańską. Mamy też nadzieję, że dwujęzyczność wydania będzie dodatkowym atutem, który da możliwość ubogacenia się odmiennością kulturową przy jednoczesnym zachowaniu swej własnej.

Aleksandra Majdzińska
Vahram Mkhitaryan

Սույն պատմվածքի հրատարակությունը, հայ ժամանակակից գրականությունը Լեհաստանում ներկայացնելու գաղափարի իրականացումն է: Մեծ ցանկություն ունեինք, որ մեկ արձակ ստեղծագործությունը առիթ լինի մեկ գրքի հրատարակման՝ հավատալով այն բանին, որ կարճ պատմվածքը կարող է լիովին ինքնուրույն ներկայանալ, որպես անկախ եւ լիարժեք՝ մեծ գործ:

Վանո Սիրադեղյանի «Գառ ախպերիկը» հանդիսացավ առաջին պատմվածք գրքույքը այդ շարքից: Նման ընտրությունը մեզ համար ակնհայտ էր, քանի որ հենց այդ պատմվածքի հիման վրա էինք գրել «Կաթնեղբայր» կարճամետրաժ խաղարկային ֆիլմի սցենարը: Մեր համատեղ կինո նախագիծը զարգացրել էինք Վայդայի կինո դպրոցում, իսկ 2014 թ.-ին, շնորհիվ Լեհաստանի կինեմատոգրաֆիստների միությանը կից գործող Մունկի ստուդիայի «ՅՕ Րոպե» ծրագրի, ինչպես նաեւ Հայաստանի Ազգային կինոնկենտրոնի աջակցությանը, այն կայացավ նաեւ որպես ֆիլմ:

Հիշելով մեր նախնական ոգեշնչման աղբյուրի մասին, այս հրատարակությունը յուրատեսակ երախտագիտության արտահայտում է, որը հույս ունենք սկիզբ կհանդիսանա փոքր՝ «մեծ» գրական շարքի, որը իր հերթին կարող է խթանել լեհ ընթերցողի հետաքրքրությունը դեպի հայ ժամանակակից գրականությունը: Վստահ ենք որ երկլեզու հրատարակությունը յուրովի լրացուցիչ առժեք կհանդիսանա, հնարավորություն տալով հարստանալու մշակութային բազմազանությամբ, միաժամանակ պահպանելով՝ սեփականը:

Ալեքսանդրա Մայքինսկա
Վահրամ Մխիթարյան

W ciągu dnia nie było jeszcze tak źle – napięcie opadało. Choć dom wciąż był odgradzony od wiejskiego dnia murem cierpienia, to jednak gwarne, hałaśliwe życie toczyło się swoim rytmem. Pianie kogutów otwierało drzwi odgłosom dnia codziennego: psy budziły się z dobrodusznym porannym szczekaniem, bydło skupione w stado pomrukiwało głucho, nasłuchując sennych cieląt, ojciec – jak co dzień – przeklinał zwierzęta, monotonnie skrzypiały drzwi sieni, talerze dzwoniły nawet wtedy, gdy dziewczynki chodziły na palcach, a wracające z pola krowy niosły w wymionach więcej zamieszania niż mleka.

Jednak noc stawała się nie do zniesienia. Dom zanurzał się w żałobie po samo dno. Nie tylko nie można było spać, ale trudno było nawet oddychać.

W nocy obudziła chłopca nieznośna cisza. Babcia nie pojękiwała świętym snem śpiącego, ojciec nie chrapał chrapaniem szczęśliwych dni, siostrzyczki nie wierciły się przez sen, matka dusiła pod kołdrą wyrywający się z jej piersi szloch – każdy starał się chronić sen pozostałych. Ale sen już dawno opuścił ten dom.

A jeszcze tydzień temu było zupełnie inaczej – nocą pod tym dachem tętniło życie. Dziewczynki nie ustawały w codziennych przepychankach, babcia wojowała z twardym tapczanem, myszy truchlały od mocnego oddechu ojca, kołyska stukała bujana ręką śpiącej matki, a chłopak, wychodząc za potrzebą do stojącego w sieni

nocnika, słuchał tego wszystkiego w półśnie i zasypiał z błogością pod powiekami.

Za dnia, kiedy nie spali, było źzej, bowiem w świadomości mocno tkwiła myśl, że „jego nie ma” i smutek nie mógł chłopca zaskoczyć. Być może i we śnie nie traciłby czujności, gdyby sen nie próbował go oszukać. Myśl o stracie nie zapadła jeszcze na tyle głęboko w świadomość, żeby, zobaczywszy ją we śnie, powiedzieć: – „To sen”. Utrata była zbyt świeża. Chłopak we śnie uspokajał się, a po przebudzeniu – złościł. Bał się zasnąć. Jednak zmęczenie ciężko opadało na powieki i kiedy próbował otrząsnąć się ze strachu przed snem, bywało już za późno.

Matka stała się obca dla rodziny. Doiła krowy, gotowała obiad, nakrywała do stołu, ścieliła łóżka niczym kobieta z sąsiedztwa – byle tylko zrobić i jak najszybciej wyjść. Tyle tylko, że ona, zrobiwszy to wszystko – nie wychodziła. Matka zostawała i atmosfera w domu stawała się w dwójnasób przygniatająca.

Po pewnym czasie piersi mamy mocno opuchły. Mleko wciąż płynęło. Matczyny smutek nie przesyłał wiadomości do mlecznego źródła i ono wciąż płynęło, lecz nie znajdowało oseska. Nie powinno tak być! Przecież jeśli nikt na mleko nie czekał, to ono samo powinno wysuszyć swoje źródło. Ale między życiem a śmiercią jest wielka sprzeczność. Mleko niosło w sobie smutek, a matka jęczała z bólu, umierała z rozpacz.

Nikt nie wiedział, jak długo matka skrywała ból w sobie. On łagodził smutek, bezcześcił świętą pamięć, odciągając domowników od żałoby – i mama gaśła w oczach.

Kiedyś, gdy dzieci były jeszcze w szkole, ojciec przyprowadził do matki pielęgniarkę – młodą mężatkę, która od niedawna mieszkała we wsi. Tato opowiadał potem, że skalpel w jej rękach zatrzeszczał jak schwytna za skrzela ryba. Dano jej chłodnej wody, poprosiła o więcej, następnie zdezynfekowała jodem miejsca do nacięcia, narysowała na krzyż dwie linie i... poszła.

Tego samego wieczoru ojciec siedział przy piecu, obok leżała wata i wódka, a on ostrzył o kamień swój kieszonkowy nóż. Spowijający go gęsty tabakowy dym przydawał temu zajęciu aurę złych czarów... Do domu wszedł jego brat i z za pazuchy wyjął białego baranka z czarnymi nóżkami. Sam przysiadł przy piecu, ścisnął baranka nogami i zapalił papierosa. Dzieci ożywiły się, ale ojciec nie zwracał uwagi na owieczkę, więc zamarli w oczekiwaniu. Nowo narodzone jagnię chwiało się, stojąc na rozpostartych nogach dla utrzymania równowagi. Raz po raz próbowało mordką dotknąć pieca, czując bijące stamtąd ciepło, ale za każdym razem napotykało dłoń wujka... Matka, niczym panna młoda, bez szmeru zносиła swój ból, babka drzemała, położywszy na kolanach skarpety, które cerowała, ojciec zaś z takim zacięciem gasił papierosa, jakby lek na uleczenie matczyne go bólu znajdował się na jego końcu.

Jasne było, że ojciec nie wiązał wielkich nadziei z nożem. Długo wodził nim po osetce, dezynfekował wódką, wypróbował ostrość na odcisku dużego palca i – znów zaczynał ostrzyć..., jakby czekał na cud. Ale jaki? – że ropień sam pęknie? albo że powierzchowne nacięcia wykonane ręką pielęgniarce same się pogłębią?... Tymczasem w niespokojnej głowie wujka świtało już rozwiązanie. Od kłębiących się myśli jego twarz to promieniała, to gasła. Wujek ukradkiem szukał

wzroku ojca, lecz ten udawał, że jest bardzo zajęty. Tymczasem jagnię przypominało o sobie swoją bezradnością... Nikt nie miał teraz dla niego serca. Wujek wyczuwał to wszystko, ale co on biedny miał zrobić! Pozwolił, żeby jagnię lekko dotknęło mordką gorącego pieca. Pierwsze w życiu uczucie bólu sprawiło, że baranek zabezczał żałościwie, a ów bek poruszył serce ojca.

– Ostrożnie, bracie...

Wujek ze spuszczoną głową wymamrotał:

– Niech jagnię... possie trochę..., ono nie ma matki.

Mama stojąca przy szafie odwróciła się, dzieci nadstawiły uszu, ojciec spojrzał na brata: nie dotarł do niego jeszcze sens wypowiedzianych słów.

– I jagnię przeżyje, i ... jej ulży. – Wujek popatrzył na ojca.

Zrozumiawszy sens słów brata, ojciec spojrzał na matkę, która zaszlochała, podtrzymując nabrzmiąte piersi, a drzemiąca babka wyprostowała przygarbione plecy.

Dzieci ze zdumieniem patrzyły to na wujka, to na ojca, to na baranka i na płaczącą matkę. Potem kobieta odwróciła się ku ścianie, a ojciec – trzymając w jednej ręce baranka, a drugą obejmując mamę – namawiał to ją, to jagniątko. Matka bezustannie płakała. Babka na wszelki wypadek nastawiła na ogniu wodę, wujek palił na podwórku, a dzieci wzruszały się, patrząc na drżący ogonek jagnięcia sterczący spod ojcowskiej pachy.

Później już wszystko odbywało się bez ojca. Dzieci zbierały się wokół mamy, a baranek zaczynał ssać.

Wydawało się, że matka płacze z bólu. Ale bólu nie ubywało. Baranek jakoś wcale nie był ratunkiem. Z czasem jednak mama poddała się radości dzieci. Zdarzało się nawet, że uśmiechała się, gdy baranek stukał mordką w jej piersi.

Jagnię pomogło jej wyjść z żałoby. Mama szła po wodę – baranek za nią postukiwał kopytkami, bojąc się, że ją zgubi, mama do sklepu – a baranek stał przy ladzie, mama piekła chleb – on dusił się od dymu z toniru^[1], ale nie odstępował jej ani na krok. A wieczorami kręcił się przy łóżku mamy i zasypiał u wezgłowia.

Wygoniwszy wszystkie barany z podwórza, matka wykorzystywała moment i uciekała do domu przed swoim oseskiem. Ten zaś zaczynał miotać się po podwórku i parskać od zapachu soczystej trawy, aż w końcu, biorąc przykład ze starszych baranów, zaczynał ją skubać jak rozkapryszone dziecko. Na wszelki wypadek syn zagradzał mu drogę do domu.

– Braciszku, mój... – Chłopiec brał baranka na ręce, całował w pyszczek i patrząc mu w oczy mówił: – Braciszku, nie rośnij.

Wkrótce na małym baranim łepku pojawiły się różki. Szyja stała się mocniejsza, nogi nabierały siły. Mama, mimo że wciąż się uśmiechała, z trudem znosiła uderzenia mordki baranka. W końcu postanowiono odstawić go od piersi starym sprawdzonym sposobem – czyli solą i pieprzem. Po trzech, czterech dniach oduczył się ssać, ale wciąż chodził z mamą krok w krok. Bywało, że zbliżał się do niej z

nadzieją na mleko, ale wtedy matka uderzała go lekko palcami po mordce, a on od razu wspominał swoje cierpkie doświadczenie. Później zapomniał i o pieprzu, i o piersi, ale nadal rósł obok mamy. Nawet gdy był już dorosłym baranem, to wciąż trzymał się maminej spódnicy.

Jeśli baran nie jest przeznaczony do stada, to chowa się go albo na złożenie ofiary, albo na mięso. Ojciec jednak nigdy nie podniósłby ręki na baranka, a matka była przeciwna nawet jego sprzedaży. Jednak osesek – im bliżej było ku jesieni – stawał się coraz bardziej niespokojny, przewracał dom do góry nogami. Jeden z pastuchów zgodził się wówczas przyjąć go do stada na dwa dni i puścić na jesienne pastwiska między owce.

...Mgła opadała równomiernie i szybko. Owcze stado zbiło się w grupę. Nagle brzeg mglistej chmury rozerwał się i ... zaatakowała wataha wilków! Młody baran, odurzony ciepłem otaczających go owiec, nie rozumiał, co się dzieje. Nie przyjął pozycji obronnej, więc kiedy owce rozsypały się jak ziarenka grochu, on nieoczekiwanie stanął oko w oko z wilczą paszczą...!

– No cóż, widać tak miało być... – westchnął ojciec, usłyszawszy straszną nowinę.

Matka milczała i zachowywała się tak, jakby przewidziała taki koniec. Chłopak płakał na strychu za sianem. Tego dnia w końcu przypomniał sobie twarz swojego brata, – ale tylko po to, aby za trzy dni zapomnieć ją już na zawsze.

[1] Tonir – rodzaj pieca, wbudowanego w ziemię, w którym piecze się tradycyjny ormiański chleb.

Ցերեկը՝ էլի ոչինչ, ցերեկը իրենն առնում էր: Թեև տունը կարեկցանքով մեկուսացված էր գյուղի գործնական անցուդարձից, կյանքի աղմուկն իր գործն անում էր. աքլորները բացում էին վերահաս օրվա ձայների դուռը, շները զարթնում էին վաղորդայնի անչար հաչոցով, նախիր քշվող անասունը մոռնում էր քնատ ձագերին ականջալուր, հայրիկը ամեն օրվա պես հայիոյում էր անհասկացող անասունին, հաշտի դուռը ճռնչում էր առօրեական, քույրիկները ինչքան էլ հուշիկ քայլեին՝ աման-չամանը զրնգում էր, դաշտից դարձած հոտի ու նախրի բերածը կաթից շատ իրարանցում էր... Բայց գիշերը անտանելի էր: Տունը սուզված էր վշտի հատակը, և քնելն ինչ է՝ շնչել չէր լինում:

Տղան գիշերը արթնանում էր զարհուրելի լռությունից: Տատը չէր տնքում քնածի սրտանց տնքոցով, հայրիկը չէր խոնփացնում ուրախ օրերի խոնփոցով, քույրիկները չէին բլբլացնում երազի մեջ, մայրիկը անակնկալ հեծկլտոցը կանխել էր՝ վերմակը գլխին քաշելով, - ամեն մեկը խնայում էր մյուսների քունը, բայց հարկի տակից քունը փախել էր:

Իսկ ընդամենը մի շաբաթ առաջ գիշերը տունը շնչում էր կյանքով: Քույրիկները շարունակում էին ցերեկվա լեզվակռիվը, տատը թախտի չորության հետ էր կռիվ տալիս, հայրիկի զորեղ շնչառությունից մկները պապանձվում էին, օրորոցը թկթկում էր քնած մայրիկի արթուն ձեռքի տակ, հաշտում դրած գիշերանոթի

մոտից անկողին դարձող տղան այդ ձայները լսում էր կարծես երազում և քուն էր մտնում՝ կոպերը երանելիորեն լրիվ չբացած:

Արթուն ժամանակ ավելի հեշտ էր. գիտակցության մեջ չկան կար հաստատ, և կսկիծը անակնկալի չէր բերում նրան: Միգուցե տղան քնած ժամանակ զգոնությունը չկորցնէր, եթե երազը չխաբեր նրան: Բայց գիտակցության մեջ կորուստը այնքան տեղ չէր արել, որ երազում եթե տեսներ, ասեր՝ երազ է: Կորուստը նոր էր և երազով միամտանում, արթնանալով դիվոտում էր: Եվ քնելուց սարսափում էր: Բայց հոգնությունը ծանր նստում էր կոպերի վրա, և երբ քնած լինելու վախից վեր էր թռչում, ուշ էր լինում:

Մայրիկը ընտանիքին խորթացել էր: Կիթ էր անում, ճաշ էր եփում, սեղան էր դնում, անկողին գցում, բայց հարևանի կնոջ նման – արագ անի թողնի գնա: Բայց քանի որ անում-չէր գնում, տան շունչը տասնապատիկ ծանրանում էր:

Հետո մայրիկի կրծքերը ուռան: Կաթը չէր կտրում: Մայրիկի վիշտը կաթի ակունքին լուր չէր տանում, կաթը գալիս ու երեխային չէր գտնում կյանքում: Պիտի որ այդպես չլինէր, եթե կաթին սպասող չկար, կաթը պիտի իր ակունքը ինքը կապեր: Բայց մի մեծ անհամաձայնություն կար կյանքի ու մահվան միջև, կսկիծ բերող ընդվզում կար կաթի հոսքի մեջ, և մայրիկը ցավից մղկտում, վշտից մեռնում էր:

Քանի՞ օր էր մայրիկը ցափս իր ներսում պահել, ոչ ոք չգիտեր: Ցավը վիշտը վարկաբեկում էր, նաև՝ սուրբ հիշատակի դեմ պղծություն էր տնեցիներին վշտից շեղելը, և մայրիկը ոտքի վրա ձեռից գնում էր:

Նույն իրիկուն հայրիկը նստած էր վառարանի մոտ, կողքն էր դրել բամբակ ու օղի, սրոցաքարով հեսանում էր իր գրպանի սուրշեղբ դանակը և ծխախոտի թանձր ծուխը նրան պարուրել՝ զբաղմունքին չարագուշակ կախարդության տեսք էր տվել... Այստեղ ներս մտավ հորեղբայրը և բաճկոնի փեշի տակից սև տոտիկներով մի ճերմակ գառնուկ դուրս բերեց: Ինքն էլ նստեց վառարանի մոտ, գառնուկին սրունքների արանքը առավ, ծխախոտ վառեց, երեխաները աշխուժացան, բայց հայրիկը ուշադրություն չէր դարձրել գառան վրա՝ նրանք սառան: Գառը՝ նորածին, անհաստատ ոտիկները հավասարակշռության համար չռած՝ երերում էր, դունչը մեկնում էր վառարանին՝ տաքը ռունգերին դուր էր գալիս, բայց հորեղբոր ափն էր գտնում... Մայրիկը նորահարսի անմոռունչությամբ ցավը քաշում էր ոտքի վրա, տատը դանթում էր՝ կարկատվող գուլպան ծնկներին դրած, հայրիկը ծխախոտը մոխրացնում էր այնպիսի ջանադրությամբ, ասես մայրիկի ցավի ճարը դրա վերջին էր:

Հայրիկը, հաստատ, դանակի վրա հույս չէր դնում: Երկար-բարակ քսում էր սրոցաքարին, օղիով ախտահանում էր, փորձում էր բթի կոշտուկի վրա, նորից էր քսում... սպասում էր, ասես, հրաշքի: Ինչի՞, որ վերքը ներսից պայթի, որ բուժակուռու մակերեսային կտրվածքը խո՞րը գնա... Այնինչ հորեղբոր անհանգիստ մտքում վճռական բան կար: Նրա դեմքը իր իսկ մտքերից վառվում-մարում էր, թաքուն հայրիկի հայացքն էր փնտրում, բայց հայրիկը, իբր թե, տարված էր գործով: Հետո, գառնուկի անօգնականությունը հիշեցնում էր... Ո՞վ սիրտ ուներ նրանով զբաղվելու: Հորեղբայրը այդ էլ էր զգում, բայց ինչ աներ խեղճ հորեղբայրը: Եվ թողեց, որ գառան դնչիկը մի քիչ առնի

վառարանին: Առաջին ցավից գառնուկը շշմեց-մայեց և հայրիկի սիրտը շարժվեց.

– Ջգույշ, այ ախպեր...

Հորեղբայրը, գլուխը կախ, քրթմնջալով վրա բերեց.

– Գառը թող... ծծի... մեր չունի...

Մայրիկը պահարանի մոտից շուռ եկավ, երեխաները ականջները խլշեցին, հայրիկը նայեց եղբորը՝ խոսքի իմաստը նրան չէր հասել:

– Համ գառը կապրի, համ... կլավանա, – այս անգամ հորեղբայրը նայեց հայրիկին:

Հասկանալով՝ հայրիկը նայեց մայրիկին, մայրիկը հեծկլտաց՝ կրծքերը բռնած, դանթող տատը շտկվեց տեղում...

Երեխաները հիացմունքով նայում էին հորեղբորը, հայրիկին, գառանը, լացող մայրիկին...

Հետո մայրիկը շուռ էր եկել պատի կողմը, հայրիկը գառանն առել էր մի թևի տակ, մյուսով գրկել էր մայրիկի ուսը, խրախուսում էր մեկ գառանը, երկու՝ մայրիկին, մայրիկը անզուսպ լալիս էր, տատը վառարանին ջուր էր դնում համենայնդեպս, հորեղբայրը դրսում ծխում էր, երեխաները զմայլված էին հայրիկի անութի տակ խլրտացող գառան պոչով:

Հետո գործը առաջ գնաց առանց հայրիկի: Երեխաները հավաքվում էին մայրիկի շուրջը և գառը կուրծքը առնում էր:

Մայրիկի արտասովոր կարծես ցավից էր: Ցավը, ոնց որ, շատ երկարեց: Ոնց որ՝ գառը փրկություն չէր: Բայց մայրիկը կամաց-կամաց երեխաների ուրախությանը տեղի տվեց: Պատահում էր, որ ժպտում էլ էր, երբ գառը կուրծքը դնչահարում էր:

Գառը մայրիկին սգից հանեց: Մայրիկը՝ ջրի, գառը ետևվից կըտկըտ գնում էր, մայրիկը՝ խանութ, գառը վաճառասեղանի առաջ կանգնած էր, մայրիկը հաց էր թխում, գառը թոնրատան ծխից խեղդվում, բայց չէր հեռանում, երեկոյան հա՛ պտտվում էր մայրիկի շուրջը և քուն էր մտնում մայրիկի մահճակալի մոտ, գլխակողմը:

Մայրիկը տղայի հետ գառները բակից դուրս էր անում, հարմար մի տեղ ձեռնասունին խաբս էր տալիս, դառնում էր տուն, գառը դես ու դեն էր նետվում, խրտնչում էր խոտի սուր հոտից, վերջը՝ գառների օրինակով, արածում էր, բայց չմակեր երեխայի պես: Համենայն դեպս, տղան տան ճանապարհը կտրած էր լինում:

«Ախպերիկ ջան, – տղան գառանը գիրկն էր առնում, պաշում էր դունչը, նայում էր աչքերի մեջ, – ախպերիկ ջան, չմեծանաս»:

Այնինչ գառան պստիկ գլխին կոտոշ էր ծլում: Վիզը պնդվում էր, ոտքերը ուժով էին լցվում, մայրիկը ժպտում էր թեև, բայց չէր դիմանում դնչահարելուն և որոշեցին կրծքից կտրեն փորձված միջոցով՝ աղուպղպեղով: Երեք-չորս օրից կրծքից կտրվեց, բայց մայրիկից չհեռացավ: Պատահում էր, մոռանում դառը փորձը, դունչը մեկնում էր ակնկալիքով, մայրիկը մատների ծայրով դնչին խփում էր՝ գառը հիշում էր: Հետո փորձն էլ, կուրծքն էլ մոռացավ,

բայց մեծանամ էր մայրիկի կողքին: Արդեն խոյ էր՝ կպած էր մայրիկի փեշից:

Խոյը կամ մատաղացու է, կամ մսացու, եթե չի պահվել հոտի համար: Բայց հայրիկի ձեռքը չէր գնա գառան վրա, մայրիկը դեմ էր մինչև անգամ վաճառելուն, իսկ ձեռնասունը աշնան վրա անհանգիստ էր, տակնուվրա էր անում տունը և հովիվը համաձայնեց երկու օրով թողնել աշնան արոտի ելած ոչխարի մեջ:

Մշուշը իջավ սահուն ու արագ, հոտը սեղմվեց, մեկ էլ պատռվեց մշուշի փեշը՝ ոհմակը խփեց: Խոյը՝ ձեռնասուն, խոյը՝ ջահել, մեղկացել էր կիտված էգերի տաք շնչի մեջ, ուշքի չէր եկել, դիրք չէր բռնել ոչխարը ցրվեց ոսպի նման և նա մնաց անակնկալ երախի դեմ:

– Էս էլ էսպես, – լուրը առնելով հառաչեց հայրիկը:

Մայրիկը լուռ էր: Նա իրեն այնպես էր պահում, ասես սկզբից վախճանը գիտեր:

Խոտանոցում տղան լալիս էր: Այդ օրը նա վերջապես մտաբերել էր եղբոր դեմքը: Երեք օրից մոռանալու էր հավիտյանս:

Spis treści:

Okładka

Strona tytułowa

Brat baranek

Գառ-ախպերիկ

Tytuł oryginału: Գառ-ախապերիկ

Copyright

dla wersji oryginalnej: Vano Siradeghyan, 2017

dla tłumaczenia (PL): Ola Majdzińska, Vahram Mkhitaryan, 2017

Zrealizowano dzięki dotacji Ministra Spraw Wewnętrznych i
Administracji



Wydanie I

ISBN

epub 978-83-7528-351-8

mobi 978-83-7528-352-5

pdf 978-83-7528-353-2

Ilustracje: Tigran Vardikyan

Logo serii: dr Arkadiusz Staniszewski

E-book wydano we współpracy

z Wydawnictwem Marpress sp. z o.o.,

ul. Targ Rybny 10B, 80-838 Gdańsk, www.marpress.pl

Wydawca:

Związek Ormiański

ul. Mariacka 34

80-833 Gdańsk

Opracowanie ebooka
Katarzyna Rek